կամաւն Այ. եւ Պետրոս կաթողիկոս Աղուանից սբ. աթոռոյ Գանձասարայ՝ նորոգեալ սբ. աթոռս Ամարասայ արհի եպիսկոպոսութեան բոլոր նահանգի Վարանդու և Քոչիզու, յանգի փլուզեալ և պատառեալ էին զմինակ աւրին՝ աւերեալ ըստ խուժանչիւր կամաց. իսկ մեք զգանկ հայրենի նորոգեալ ժողովեցաք, նորոգեցաք, զփրկելի աւանդս մեր զսէր Բարսեղ արհի եպիսկոպոսըն, որ և հրամայեցաք սմա շինել զեկեղեցիս հովարան Ամարասայ, զոր և շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաւնի այլակերպութեանն Քրիստոսի. և աւհնեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք Երկրիս Վարանդու և Քոչիզու, որ եղիցի այս երկու աթոռս մի: Ով ոք զայս վիճակս բաժանել և զոք նստուցանել այլ տեղի, եթէ կաթողիկոս իցէ կամ եպիսկոպոս տէր՝ նզովեալ եղիցի :ՅԺԸ: (318) հայրապետացն, ընդ խաչահանուացն դասեսցի, Յուդայի մասնակից եղիցի: Այս կտակ և արձանագիր յաւիտեան մնայ հաստատ:

Ծանոթ. *Բեմն այժմ ամբողջովին քանդված է. նրա քարերով ինչ-որ բաժանումներ են արված եկեղեցու ներսում։ Այդպիսի մի անշաղախ պատի մեջ դրված է այս արձանագրության քարերից 7 հատ, որոնք դասավորված են այնպես, ինչպես գծագրության վրա։*

Հրատ. Ջալալեանց II, 331։ Բարխուդարեանց, 104։ Լալաեան, II, 104։

***581. Ս. ԳՐԻԳՈՐԻՍԻ** հարավային ավանդատան մեջ եղել է դերեզմանաքար՝ հետևյալ տապանագրով, այժմ չկա.*

Այս է տապան Հայրապետի, սրբազան մեծ վեհապետի, Տեառն Իսրայէլ դիտապետի, տանս Աղուանից Հովուապետի. Աջորդ սրբոյն Եղիշէի, աթոռակալ Գրիգորիսի, ժառանգ մեծին Սիմէօնի, և թոռն պետին Ներսիսի, Ջի էր որդի մեծատնեռի, իշխանազնեայ այն Ասրէսի, :ՌՄԾԷ: (1808) Հայոց թուի, Յուլիսի երեքն վախճանի, Յիսուսն առ ցէ սա արժանի, ով ոք կարդալ հանդիպեսցի:

Հրատ. Ջալալեանց, II, 332։ Լալաեան, II, 41։

***582. ԽԱՉՔԱՐԻ** վրա եղել է.*

Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ ի Քս. թվին :ՌԼ: (1581):

Հրատ. Ջալալեան, II, 332։

54. ԹԱՂԱՎԱՐԴ ԳՅՈՒՂ

Թաղավարդ անունով այժմ գոյություն ունի երկու գյուղ՝ Վերին Թաղավարդ և Ներքին Թաղավարդ։ Այս երկուսի արանքում մնում են երրորդի ավերակները, որոնք կոչվում են Հին Ներքին Թաղավարդ։

Վերին Թաղավարդից *մոտ 2 կիլոմետր հարավ-արևմուտք, մի նեղ լեռնաբազուկի վրա մնում են Ջոզտ Գովածառ կամ Բարևածառ կոչվող վանքի աննշան ավերակները։ Բարխուդարյանցի այցելած ժամանակ ավերակների մեջ եղել են եկեղեցի և գավիթ. այժմ միայն հիմնապատերն են մնում. ոչնչացել են նաև նրա արտագրած կարևոր արձանագրությունների մեծ մասը։*

Ներքին Թաղավարդում *հին հուշարձաններ չկան, գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցին, ըստ արձանագրության, շինված է 1840 թ.*[1]*։*

Հին Ներքին Թաղավարդը *եղել է ընդարձակ գյուղ, որի ավերակները ցրված են մեծ*

[1] Մ. Բարխուդարեանց, *Արցախ, էջ 89,*

տարածության վրա։ Պահպանվել է կիսականգուն եկեղեցին, ծածկը ամբողջովին է, պատերը մասամբ փլված. դրա վրայից Բարխուդարյանցն արտագրել է շինարարական անթվական արձանագրությունը, որն այժմ չկա. հավանաբար XVII դարի վերջերի շենք է։ Պատերին պահպանված մանր արձանագրությունները եւ XVII դարի են։

Այս գյուղերից մեր ժողովածուն պարունակում է տասնմեկ արձանագրություն, որոնցից չորսը հրատարակվում են առաջին անգամ։

583. ՋՈՂՏ ՊՌԱՎԱԾԱՌԻ ՎԱՆՔ.

***ԽԱՉՔԱՐ**, ջարդված մի քանի մասի և հավաքված իրար մոտ. գտնվում է եկեղեցու բեմի վայրում. շրջանակներին և ստորին մասում 5 տող.*

Ս
Ո
Ւ
Ր
Բ

Յ
Ո
Ա
Ն
Ն
Է
Ս

ԸՐԲՈ··ԽԱՍ
ԻՍԶՅՈՎԱՆ
ՆՈՒՍԵՐԷՑ

ՍՈՒՐԲ| ՅՈԱՆՆԷՍ|. ⌈ԿԱՆԳՆՈՂ. ՍԻ⌈ՐԲՈ⌉Յ ԽԱՉ|ԻՍ ԶՈ-
ՎԱՆ|ՆԷՍ ԵՐԷՑ:

Հրատ. Բարխուդարեանց, 90 (Բերի)։

584. ԽԱՉՔԱՐ, *փոքր, հենած է գավթի պատին. ստորին մասում 3 տող.*

ՔՍ ԱԾ
ՈՒՍԷՓԵ
ՐԷՑ

ՔՍ. ԱԾ.| ՈՒՍԷՓ |ԵՐԵՑ:

Հրատ.՝ Բարխուդարեանց, 90։

585. ԽԱՉՔԱՐ. *փոքր, հենած է եկեղեցու պատին, ստորին մասում 2 տող.*

ՈՒՍԷՓԵՐԷ·
ՅԻՂԵՑԷՔ

ՈՒՍԷՓ ԵՐԷ⌈Ց⌉| ՅԻՇԵՑԷՔ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

586. ԽԱՉՔԱՐԻ *վրա.*

Սուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգո իմո և ծնողաց իմոց: Արդ, որք երկրպագէք սուրբ նշանիս զիս յաղօթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշեսցէ թվ. :ՆԽԶ: էր (997):

587. ՆՈՒՅՆ ԽԱՉՔԱՐԻ ՄՅՈՒՍ ԵՐԵՍԻՆ.

Սուրբ Պաւղոս. յամս աստուածապաշտ և հոգևոր տեառն Յովհաննիսի Ամարասա եպիսկոպոսին և պետութեան տեառն Գագիկայ Աղուանից իշխանաց իշխանի ես Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւր որդի Կոկոնա · ·

Հրատ. Բարխուդարեանց, 91։ Լալայեան, II, 8։ Ս. Բաբախանեանց, Ուխտավորի հիշատակարան, Շուշի, 1885, էջ 5։

խաչքարի վրա.

588. Հիսուս Քրիստոս. հայոց թվ.ին :ՈՀԷ: (1228). ես Ալի, որդի Ջենովբին եկի ի Պարսից, շինեցի զսուրբ եկեղեցիս Աստուծոյ, փրկութիւն հոգոյ իմոյ. որք երկրպագէք, զիս յիշեսջիք և Աստուած զձեզ յիշեսցէ:

Հրատ. Բարխուդարեանց, 91։

589. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

Հոգւոր նաւրն և եղբաւրն, զՍողոմոն երայց (երէց), կանգնող խաչիս յաղաւթս յիշեսջիք աղաչեմ. ամէն:

Հրատ. Բարխուդարեանց, 90—91։

Հին Ներքին Թաղավարդ

590. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ հարավային (առաջինը բեմի կողմից) որմնամույթի ստորին մասում երկու մետրաչափ մի երեսպատման քարի վրա խաչ և տակին 3 տող.

ԱՅՍ Է Ս̅Բ̅ ԽԱՉՍ
ԴԱՒՈՒԹԻՆ
Թ̅Վ̅ ՌԾԷ

ԱՑՍ Է Ս̅Բ̅. ԽԱՉՍ| ԴԱՒՈՒԹԻՆ|. Թ̅Վ̅. :ՌԾԷ: (1608):

591. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, ներքուստ, բեմի մոտ, մի երեսպատման քարի վրա, 2 տող.

ԹՎԻՆ
ՌՂԴ

ԹՎԻՆ| :ՌՂԴ: (1645):

592. ԽԱՉՔԱՐ, ագուցված է նախորդ արձանագրությունից ներքև, վրան՝ թերի 2 տող.

...ՄԱՐՏԻՐՈՍԿԱՆԿՆԵՅԻԽՉՓՐԿ...
ԹԻԱԿՆ.....

⌈ԵՍ⌉ ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ Խ⌊Ա⌋Չ⌊Ս⌋
ՓՐԿ⌈ՈՒԹԵԱՆ . . . . . .| ԹԻԱԿԱ-
Ն⌈ԻՆ . . . . .

593. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի մոտ, մի քարի վրա եղել է.

Ես անարժան Գրիգորս շինեցի Թաղավարդու եկեղեցին. առաջնորդութիւն Տաւութին որդին, նոր Պաապասին, Ամիրպէկին. այնպէս սէրուն էր, որ գիւերն քուն չկէ:

Հրատ. Բարխուդարեանց, 89։

55. ՇԵԽԵՐ ԳՅՈՒՂ

594. ՄԱՏՈՒՌԻ ՎՐԱ, որը գտնվում է գյուղի հարավային բլրի վրա.

թվին ՌԾԲ: (1603):

Հրատ. Բարխուդարեանց, 87։

56. ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔ

Արցախի այս հնագույն և նշանավոր վանքի հիմնարկությունը ավանդաբար վերագրվում է Գրիգոր Լուսավորչին, իսկ ավարտումը և օծումը՝ նրա թոռ, Աղվանից առաքյալ Գրիգորիսին։ Վերջինիս նահատակումից հետո նրա աշակերտները Գրիգորիսի աճյունը թաղում են հենց այս վանքում։

Մեկուկես հազարամյակի անցյալ ունեցող այս վանքը ականատես է եղել պատմական խոշոր իրադարձությունների, ունեցել է իր ծաղկման շրջանը, երբ այնտեղ են նստել Աղվանից կաթողիկոսները, կրել է նաև աղետներ ու ավերածություններ և հետագայում մնացել անմարդաբնակ։